

նէր նպատակներու եւ ձգտումներու այն բարդ հիւսուածքին մէջ, որոնք դարերէ ի վեր հիմքն են եղեր բրիտանական քաղաքականութեան: Այդ վերջինի հիմնական ձգտումն է եղեր միշտ՝ պահպանել ոյժերու հաւասարակշիռը եւրոպական ցամաքի վրայ եւ թոյլ չտալ, որ ցամաքային պետութիւններէն ոեւէ մէկը — Ֆրանսա, Գերմանիա, Աւստրո-Հունգարիա, Ռուսաստան — չտիէն դուրս աճի ու զօրանայ, ի հաշիւ միւսներու... Այդ իսկ պատճառով նա նետուեց 1914-ին պատերազմի բեմ ընդդէմ Գերմանիոյ, որը չափազանց զօրանալով, կը ձգտէր խախտել վերոյիշեալ հաւասարակշիռը, տիրապատել ցամաքի վրայ եւ սպառնալ նոյն ինքն Անգլիային: Պատերազմը վերջացաւ Գերմանիոյ պարտութեամբ եւ այժմ արդէն Մեծ Բրիտանիան սկսեց մտահոգուիլ Ֆրանսայի զօրացման հեռանկարով:

Ֆրանսան ոչ միայն ծառայեր էր Գերմանիոյ դէմ յաղթողի պահանջկոտ իրաւունքով, այլ եւ կը ձգտէր իր հովանիի տակ առնել ամբողջ կենտրոնական ու հարաւային Եւրոպան, Լեհաստան, Չեխո-Սլովակիա, Ռումանիա, որոնք արդէն մտած են Ֆրանսական ազդեցութեան շրջանակին մէջ եւ պիտի ծառայեն Ֆրանսային որպէս պատուար Գերմանիոյ դէմ:

Անգլիան կասկածոտ աչքով կը դիտէ ծաւալումի այդ քաղաքականութիւնը, ուստի եւ ստէպ — հաւասարակշիռը պահպանելու մըտահոգութեամբ — ուղղակի կամ անուղղակի թեւ կուտայ պարտուած Գերմանիային, որ կլէմանտներն ու Պուանքառէները կ'ուզէին պառակտումի ու կործանումի անդունդը նետել... Նոյն մտահոգութեամբ Անգլիան առհասարակ չի քաջալերել Լեհական դատը եւ յաճախ լքեր է Լեհաստանը, զոր միշտ դիտեր է որպէս Ֆրանսայի մոլորակ մը:

* * *

Ֆրանս-գերմանական հազարամեայ վէճը լուծուե՞ց արդեօք Լօքարնոյի դաշնագրով...

Հարկաւ, ոչ: Գերման կառավարութիւնը ժամանակին հանդիսաւոր կերպով յայտարարեց, թէ կը հրաժարի Ալգաս-Լօռենէն եթէ Վերսայլի մէջ ընդունուած սահմանները Գերմանիոյ եւ Ֆրանսիոյ միջեւ, Գերմանիոյ եւ Բելգիայի միջեւ՝ կը մնան յաւէտ անձեռնմը-

խելի: Բայց վաղը Հինդենբուրգի թեւերուն տակ միապետութիւնը անակնկալ հարուածով մը կարող է վոխարինել հանրապետութեան: Վիլհէլմն ու թագաժառանգը կարող են վերագառնալ ու վերստին դահակալել... Վաղը արքայական Գերմանիան, նոր դաշնակիցներ գտնելով — ամենէն առաջ Ռուսաստանը — կարող է պատուել Վերսայլի, Լօքարնոյի դաշնագրերը, եւ միջազգային ոեւէ շփոթէ օգտուելով, վերստին դրոճ տալ նախկին Անտանտի դէմ:

Այսօր արդէն գերման աջակողմեան բլուկը, որ զօրաւոր կշիռ ունի Մարքսի ներկայ դահլիճին մէջ, աղմկօրէն կը մերժէ Լօքարնոյի համաձայնութիւնը. արքայականները հրապարակային բազմամարդ ժողովներում, թագաժառանգի ու այլ «բարձր» շիւրերու ներկայութեամբ մեծազորով որոշումներ կը քուէարկեն, ուխտուելով պատրաստուիլ ռըվանշի*) համար, Ալգաս-Լօռէնի եւ այլ կորսուած նահանգներու վերանուսձման համար...

Մենք յուսալից ենք այնուամենայնիւ, որ հանրապետութիւնն ու ռամկալարութիւնը յաղթանակով պիտի ելնեն Գերմանիոյ յարատեւ քաղաքական ճգնաժամէն եւ որ Ֆրանս-գերմանական յարաբերութիւնները աստիճանաբար պիտի խաղաղուին:

Մեծ Բրիտանիան ահաւոր ազդակ մըն է Գերմանիոյ եւ աշխարհի աչքում եւ անոր ընդունած որոշումը Լօքարնոյի մէջ հաւանականօրէն զուսպ պիտի պահէ անգամ յետագէմ Գերմանիան:

Վստահօրէն կարելի է ըսել, որ եթէ 1914-ին Գերմանիան գիտնար, թէ Անգլիան պիտի անցնէր Ֆրանսայի ու Ռուսաստանի կողմը, պիտի խուսափէր պատերազմէն...

Սակայն, անդին, եւրոպական ցամաքի վրայ ուրիշ կինճիռներ կան, որոնցմէ արդէն դրեթէ բացակայ է անգլիական ազդակը: Լոնտոնը Լօքարնոյում երաշխաւորեց Ֆրանսայի ապահովութիւնը. բայց նա նոյն ձեւով չերաշխաւորեց, օրինակ, Լեհաստանի ապահովութիւնը: Լոնտոնը չուզեց շատացնել իր միջա-

*) Փոխվրէժ: